ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1973 Թ. ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ՆԻՍՏԻՑ

Հունիսի 1-ին, չորեքշաբթի օր.

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանի զեկույցը, Մայր Աթոռիս 1972 թվականի բյուջեի կատարողականի և 1973 թվականի նախահաշվի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը մտքերի փոխանակությունից հետո անհրաժեշտ գտավ առավել խնայողությամբ վարել Մայր Աթոռի ֆինանսական գործունեությունը, հատկապես շինարարական աշխատանքներում:

Գերագույն հոգևոր խորհուրդը վավերացրեց 1972 թվականի Մայր Աթոռի բյուջեի կատարողականը և հաստատեց 1973 թվականի բյուջեի նախահաշիվը:

Այս առթիվ Գերագույն հոգևոր խորհուրդը իր գնահատանքն է արձանագրում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանի կատարած բարեխիղճ և ազնիվ աշխատանքի համար:

1973 Թ. ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ա. Գերագույն հոգևոր խորհուրդը սույն նիստում քննության առավ Երևանի ս. Զորավար եկեղեցու նախկին քահանա Հովհաննես Կարապետյանի 3 հունիս 1973 թվակիր՝ Վեհափառ Հայրապետին ուղղված աղերսագիրը, ուր անկեղծ և խոր զղջում էր հայտնում, որ 1970 թվականին, դրժելով իր ծառայության ուխտը, լքել էր Երևանի իր հոտը և մեկնել արտասահման, որի համար էլ Վեհափառ Հայրապետի վճռով կարգալույծ էր հռչակվել: Ժողովում հաղորդում լսվեց այն մասին, որ Հովհաննես Կարա-

պետյանը արտասահման մեկնելու առաջին իսկ օրից, զգալով իր կատարած ծանր սխալը, դիմել էր Հայոց Հայրապետին՝ խնդրելով ներում և վերահաստատում իր քահանայական կարգի մեջ, պատրաստակամություն հայտնելով անմիջապես վերադառնալու հայրենիք և դարձյալ ծառայելու Երևանի ս. Զորավար եկեղեցում:

Գերագույն հոգևոր խորհուրդը, ի նկատի ունենալով նախկին քահանա Հովհաննես Կարապետյանի անկեղծ զղջումը և հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, և վերջին երեք տարիների նրա պաշտոնազրկումը ու բարոյական տառապանքը համարելով ապաշխարության շրջան, նաև նկատի ունենալով, որ նա իր հավատարմության ուխտը այսօր վերանորոգել է Փրկչի Իջման ս. սեղանի առաջ և իր պատրաստակամությունն է հայտնում ծառայելու Հայաստանյայց եկեղեցուն՝ Հայաստանում կամ արտասահմանում, ուր որ Վեհափառ Հայրապետը նրան կնշանակի, որոշեց խնդրել Նորին Ս. Օծությանը՝ ներում շնորհել և վերականգնել Հովհաննես Կարապետյանին իր քահանայական կոչման ու պաշտոնի մեջ:

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Գերագույն հոգևոր խորհրդի միջնորդությանը, ներում է շնորհում Հովհաննես քահանա Կարապետյանին և նրան վերականգնում իր քահանայական կոչման ու պաշտոնի մեջ՝ նշանակելով նրան հոգևոր հովիվ Լիոն քաղաքում, համաձայն տ. Սերովբե արքեպիսկոպոսի առաջարկության:

Բ. Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է նաև տ. Վահան եպս. Տերյանի զեկույցը իր՝ Կալկաթա այցելության մասին:

Տ. Վահան եպիսկոպոսը հանգամանորեն ներկայացնում է իր զեկուցագրի մեջ Հնդկաստանի և ի մասնավորի Կալկաթայի հայ համայնքի եկեղեցական - մշակութային կյանքը և որոշ տեղեկություններ է հաղորդում Մասեհ Բաբաջանյանի կտակի հետ կապված խնդիրների մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը տ. Վահան եպիսկոպոսի զեկույցն ընդունում է ի գիտություն:

Գ. Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում լսվում է Մայր Աթոռի շինարարական աշխատանքների ղեկավար և գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի զեկույցը Մայր Աթոռի 1973 թվականի շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

Մայր Աթոռի ճարտարապետը հանգամանորեն խոսում է Երևանի ս. Սարգիս եկեղեցու, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցի և Մայր Աթոռում «Ղազարապատ»-ի վրա կատարված, կատարվող և ընթացիկ շինարարական աշխատանքների մասին:

Ճարտարապետ Ա. Գալիկյանը իր զեկուցագրում խոսում է նաև ս. Գեղարդ վանքում կատարվող շինարարական մանր աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետը և Գերագույն հոգևոր խորհուրդը արձանագրում են Մայր Աթոռի ճարտարապետ և շինարարական աշխատանքների ղեկավար Ա. Գալիկյանի կատարած բարեխիղճ աշխատանքը և որոշում են ընդունում հրահանգել նրան, որպեսզի որքան հնարավոր է շուտ ավարտվի 1973 թվականի համար նախատեսված շինարարական ծրագիրը Մայր Աթոռում և նրա շրջանակից դուրս:

Վեհափառ Հայրապետը և Գերագույն հոգևոր խորհուրդը շեշտում են հատկապես կարելի փութով ավարտումը ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման: